Նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-536[1]-29.03.2020-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Բանկերի եւ բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 1996 թվականի հունիսի 30-ի ՀՕ-68 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 21. 2-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «կամ այլ կապի» բառերից հետո լրացնել «, ներառյալ՝ էլեկտրոնային փոստի, ծրագրային եւ հավելվածային հարթակների (այդ թվում՝ բջջային հավելվածների)» բառերը.
2) 1-ին մասի վերջին նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ < Նման նիստը հեռակա (հարցման) կարգով անցկացված նիստ չի համարվում, իսկ այդպիսի նիստում ընդունված որոշումները չեն համարվում հեռակա քվեարկության (հարցման) միջոցով ընդունված>:

Հոդված 2. Օրենքի 21. 7-րդ հոդվածի 2-րդ մասում «կամ կապի այլ» բառերից հետո լրացնել «, ներառյալ՝ էլեկտրոնային փոստի, ծրագրային եւ հավելվածային հարթակների (այդ թվում՝ բջջային հավելվածների)» բառերը:

Հոդված 3.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Երկրորդ ընթերցում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Բանկերի եւ բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 1996 թվականի հունիսի 30-ի ՀՕ-68 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 21. 2-րդ հոդվածում՝

3) ~~ի 1-ին մասից հանել «, բացառությամբ սույն օրենքի 211 հոդվածի երկրորդ մասի «բ», «գ» եւ «ը» կետերում նշված հարցերի: Տարեկան ընդհանուր ժողովը չի կարող անցկացվել հեռակա կարգով քվեարկության (հարցման) միջոցով» բառերը, եւ~~ 1-ին մասում «կամ այլ կապի» բառերից հետո լրացնել «, ներառյալ՝ էլեկտրոնային փոստի, ծրագրային եւ հավելվածային հարթակների (այդ թվում՝ բջջային հավելվածների)» բառերը.
4) 1-ին մասի վերջին նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ < Նման նիստը հեռակա (հարցման) կարգով անցկացված նիստ չի համարվում, իսկ այդպիսի նիստում ընդունված որոշումները չեն համարվում հեռակա քվեարկության (հարցման) միջոցով ընդունված~~:~~>:

Հոդված 2. Օրենքի 21. 7-րդ հոդվածի 2-րդ մասում «կամ կապի այլ» բառերից հետո լրացնել «, ներառյալ՝ էլեկտրոնային փոստի, ծրագրային եւ հավելվածային հարթակների (այդ թվում՝ բջջային հավելվածների)» բառերը~~, եւ 2-րդ մասի վերջին նախադասությունը հանել~~:

Հոդված 3.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ««ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ » ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Փաստաթղթային կոդ՝ Կ-536[1]-29.03.2020-ՏՀ-011/1) ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՎԵՐԲԵՐՅԱԼ

	Առաջարկության, (փոփոխության, լրացման) հեղինակը	**Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը**	**Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)**	**Առաջարկությանն վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը**	**Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ Հանձնաժողովի որոշումը**
1	**2**	**3**	**4**	**5**	**6**
1.	ՀՀ կառավարություն	«Բանկերի եւ բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին> ՀՀ օրենքի 1-ին հոդվածով փոփոխվող 21. 2-րդ հոդվածի	Օրենքի 21. 2-րդ հոդվածի փոփոխության բովանդակությունը առաջարկվում է հետևյալ կերպ 1) 1-ին մասում «կամ այլ կապի» բառերից հետո լրացնել «, ներառյալ՝ էլեկտրոնային փոստի, ծրագրային եւ հավելվածային հարթակների (այդ թվում՝ բջջային հավելվածների)» բառերը. 2) 1-ին մասի վերջին նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ «Նման նիստը հեռակա	Ընդունվել է	Ընդունվել է

		առաջին մաս	(հարցման) կարգով անցկացված նիստ չի համարվում, իսկ այդպիսի նիստում ընդունված որոշումները չեն համարվում հեռակա քվեարկության (հարցման) միջոցով ընդունված»□ Խնդիրը կայանում է նրանում, որ այդ նույն հոդվածով թույլատրվում է իրական ժամանակի ռեժիմով տեխնիկական միջոցների օգտագործմամբ ժողով իրականացնել և դա չի համարվում հեռակա: Օրենքն ունի միայն որոշ սահմանափակումներ, որոնցով արգելվում է որոշումների քվեարկություն հեռակա ձևով, ինչն էլ առաջարկվում է հանել: Ստացվում է, որ բանկային ոլորտում իրական ռեժիմով ցանկացած հարցի վերաբերյալ կարելի է ժողով իրականացնել և որոշում ընդունել և դա չի հանդիսանում հեռակա նիստ և դրանում ընդունված որոշումը հեռական կարգով ընդունված որոշում □		
2.	ՀՀ կառավարություն	«Բանկերի եւ բանկային գործունեությա	Նախագծի 2-րդ հոդվածից հանել «և 2-րդ մասի վերջին նախադասությունը հանել» բառերը վերը նշված	Ընդունվել է	Ընդունվել է

		ն մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին> ՀՀ օրենքի 1-ին հոդվածով փոփոխվող օրենքի 21. 2-րդ հոդվածի առաջին մաս	հիմնավորմամբ:		